ՇԻԼԼԷՐ

(Նրա մահուան հարիւրամեակի առիթով)

Մաքս Դիեզի

Շիլլերի անունը ներկայ դարի զարդն է։ Նա նորից ո-
ղևորութիւն կը ներշնչէ գերմանական ազգին և կը միացնէ
նրան, ինչպէս և 1859 թուականին այս խորհրդաւոր մեծ տա-
նին։ Հարիւր տարի անցել գնացել են Շիլլերի մահուան օրից,
բայց այդ երկար ժամանակամիջոցը չի նսեմացրել նրա ամ-
բողջ մեծութիւնը։ Նրա պայծառ ճակատը չէ ակոսուել կնճիռ-
ներով և ծալքերով, նրա դիմագծերի հպարտ փայլը չէ դալկա-
ցել հնութեան քողի տակ։ Այսօր էլ «Աւազակները» տիրում
են թատրոնական բեմերի վրայ, չնայած որ այդ երկի կրքոտ
պայքարը՝ ուղղած ժամանակի դէմ, կորցրել է իր նախկին նը-
շանակութիւնը. բայց և այնպէս նրա դրամատիքական ներքին
ոյժը պատկերանում է մեզ այժմ իր իսկական՝ աւելի ևս հոյա-
կապ մեծութեամբ։ Այսօր էլ կարելի է կրկնել Գեօթէի խօսքը
«Վալլէնշտէյնի» մասին. «նա այնքան մեծ է, որ իր տեսակի
մէջ նմանը չունի»։ Եւ, իրաւ, Գերմանիայում քիչ երկեր կը
գտնուին՝ դրամատիքական հանճարից ծնուած, որոնք մոտա-
ցուած չլինեն Շիլլերի վարպետական դրամաների առաջ. աւելի
ևս քչերն են կարողանում մրցել նրանց հետ թատրոններում։
Դրա պատճառը ոչ միայն բանաստեղծի երկերի մէջ յայտնուող
անկասկածելի մեծ բանաստեղծական ոյժն է և մասամբ դեռ
չգերազանցած նրա դրամատիքական տեխնիկան, այլ այն, որ
ոչ ոք այնքան խորը չի թափանցել ժողովրդի սիրտը, այնպէս
պարզ և զօրեղ կերպով չի արտայայտել ժողովրդական ոգու
ուժեղ ու մեծ շարժումները, ոչ ոք այնպէս ազդու և համոզիչ
կերպով չի դարձրել մարդկութեան յաւիտենական իղձալները
աշխարհի և գեղարուեստի օրէնք։ Այդ պատճառով ապարդիւն են
անցել քննադատութեան բազմաթիւ յարձակումները՝ ուղղուած

Շիլլերի դէմ։ Մինչև այժմ դեռ գոյութիւն չէ ունեցել մի աւելի բարձր և իդէալական դրամա, որ քննադատութիւնը կարողանար նրան գերադասել Շիլլերի դրաժայից և նսեմացնել նրա հանճարը։ Այդպիսին գուցէ ծնուի միայն ապագայում։ Իրաւացի է ուրեմն, որ Գերմանիան պիտի պատրաստուի տօնելու այս տարի Շիլլերի վաղաժամ մահուան յիշատակը։ Ի հարկէ, ի թիւս այլոց կը լինեն նաև շատ ունայն ճառեր, անմիտ ցուցամոլութիւններ։ Շատերը կօգտուին առիթից՝ Շիլլերի շուաքով քիչ փառք վաստակելու, թէպէտ այդպիսինների համար բանաստեղծը լոկ մի անուն է պատմութեան պանթէօնում, մի կուռք՝ փառքի հեռաւոր վայհալլայում. նրանց կարծիքով բոլորն էլ նրան մեծարում են անհրաժեշտութիւնից դրդուած, որպէսզի աւօրեայ հոգսերով ծանրաբեռնուած՝ հանդիստ խղճով անցնել կարողանան նրա արձանի մօտով։ Նախարարները, երևի մի քանի ֆրազներ կը գտնեն նրան փառաբանելու, չնայած որ մի մօդեռն Մարկիզ Պօզայի հեղինակի համար նրանք պատրաստ կը պահէին ոչ թէ պատմութեան ամբիօնը, այլ... դատախազինը։ Ուսանողները, որոնք՝ մտնելով մի որևէ ակադեմիական ընկերութեան մէջ, զգուշութեամբ չափում, ձևում են իրանց ընտրութիւնը, որ պիտի տանի դէպի պետութեան կերակրող մասուրը, կը մերկացնեն իրանց սրերը «փախստականի» նկարի առջև և միայն կոնծաբանութեամբ կը պատուեն օրուայ հերոսին։ Վախենում եմ որ նաև գիտնականներից ոմանք կը սկսեն աստուածացնել իդէալի հակայ մարտիկին և նրա յեղափոխական անվեհեր ոգին, չնայած որ նրանք իրանց ողորմելի վախկոտութիւնը ծածկելու համար երբեմն ի չարն են գործ դնում մանանգիտութեան և հիմնաւոր ուսումնասիրութեան գեղեցիկ անունները։ Զգուշաբար խուսափելով իրական կեանքի կենսական պահանջներից, այդ անխոնջ աշխատաւորները դուրս կը բերեն համաշխարհային պատմութեան արխիւների փոշու միջից Շիլլերի կեանքին վերաբերեալ մի քանի անշնչան և չնչին կտորներ, որոնք իբր աւելի են պարզաբանելու մեզ Կարլ Մօօրի սաստիկ և ազնիւ զայրոյթը—թքած այս թանաքամոլ աշխարհի վրայ. թքած թուլամորթների այս ուժասպառ դարու վրայ։

Որքան դժբաղդ կը լինէր գերմանական ազգը։ Այս մեծ տօնին, եթէ նրա զաւակներից քչերը անկեղծօրէն կապէին Շիլլերի անուան հետ իրանց երիտասարդութեան գեղեցիկ օրերի, քաղցր ժամերի յիշողութիւնները, եթէ պարզամիտներում և գրասենեակներում, խմբագրատներում և աւետարանական

քիւրօնէրում, ժողովրդական դպրոցում և գեղարուեստագէտի դործանոցում քչերը՝ Շիլլերին կարդալիս՝ երևակայութեամբ սլանալին իրանց երիտասարդութեան շրջանը, երբ նրանք զանում էին երիտասարդ Շիլլերի մէջ իրանց առաջին երազուն իդէալների աւետաբերին և թարգմանչին։ «Երանի սիրով վառուածներին. նրանք նմանում են աստուածներին»։ «Այն ձվ է այնտեղ՝ անդունդի եզրին հպարտ քայլում է անյաղթի նման»։ «Թոյլ տուր տեսնեմ, մի՞թէ իմ ազնուականութեան հրովարտակը նոյնքան հին է, որքան և այս անվերջ տիեզերքը կամ իմ վինադրօշը (գերբը) աւելի է նշանակում, քան Լուիզայի աչքերում երկնքի այն բոցը»։ «Գնացէք ասացէք նրան, որ պատկառի իր երիտասարդութեան առաջ, երբ կը մեծանայ, որ նա վակի աստուածների պարգևած իր քնքոյշ ծաղիկ սիրտը՝ հրեշակուած յաղթող բանականութեան սպանիչ միջատի առաջ,— որ նա, վերջապէս չմոլորուի, երբ տեսնի փոշու նման մանր իմաստութիւնը քրքրելիս ու պղծելիս տիեզերքի անհունութիւնը»։ Սրտի այս զեղումների մէջ յայտնւում են արդէն տիեզերքը ընդգրկող մտքերի առաջին թռիչքները՝ հիւսուած հազարաւոր անմոռանալի յիշողութիւնների հետ մեր կեանքի խնդիր ու խնդուռ օրերի և ջերմ սիրոյ առաջին բաբախման շրջանից։

Մենք, ի հարկէ կը մտաբերենք նաև, որ շատերի համար վրայ է հասնում մի ժամանակ, երբ Շիլլերը անսիրելի է դառնում, երբ նա կորցնում է իր ամբողջ թովչութիւնը և կասկած է ներշնչում, որ խօսքերի այս փայլուն զարդի տակ քիչ կեանք է ապրում։ Այս պարագայում դառնում ենք Գիօթէին և սկսում համեմատել նրա և Շիլլերի արժանաւորութիւնները։ Սմին մի անկանխակալ ու անաչառ մարդ նկատում է խոկոն, որ Գիօթէն իրրև բանաստեղծ տալիս է աւելի հարուստ ու պեղեցիկ քերթուածներ, որ նա անմիջապէս հաղորդում է իրականութիւնը, հոգու աւելի քնքոյշ ու նուրբ հիւսուածքները, բայց որ ամենագլխաւորն է, աւելի փայլուն կատարելութեան է հասցնում բանաստեղծութեան յատուկ դրամատրութիւնը, տեսչազուրկ հաճոյքը, կամքի մշակման գործում արտայայտուող հոյակապ խաղաղութիւնը, քան Շիլլերը։ Բայց Գիօթէին դերադասելու ցանկութիւնը չքանում է ու տեղի տալիս այն ճշմարտութեան, որ Գիօթէն Շիլլերի նման երբէք չէր կարող ոգևորութիւն առաջացնել պատանեկան և երիտասարդական սրտերում։

Մեր կասկածը Շիլլերի մեծութեան նկատմամբ վերջնականապէս փարատում է, երբ մենք սկսում ենք զգալ, որ մարդկութեան հանճարները իրանց էութիւնը արտայայտելու հա-

մաբ ժառւոր աշխատանքի միակողմանի ուղին չեն բռնում և որ անարդար կը լինէր գնահատել Շիլլերին և Գեօթէին լոկ իբրև բանաստեղծներ։ Նրանց բանաստեղծական դրութիւնները, գուցէ, ըղխում են հէնց նրանց մեծութիւնից։ Այդ հայեցակէտը ինքն ըստ ինքեան բնական է թւում մեզ, երբ ուսումնասիրում ենք նրանց բանաստեղծական երկերը։ Ճիմարութիւն կը լինէր «Ֆաուստի» ամբողջ արժէքը չափել զուտ դրամատիկական գեղարուեստի օրէնքներով։ Ֆաուստը իբրև բանաստեղծութիւն աւելի մեծ է, քան Ֆաուստի—դրաման։ Եւ Շիլլերը իբրև մարդ աւելի բարձր է, քան Շիլլեր բանաստեղծը։ Որոշ չափով կարելի է նոյնիսկ պատահական համարել Շիլլերի բանաստեղծ լինելը. նա կարող էր հաւասարաչափ պատուազէտ կամ փիլիսոփայ լինել։ Եւ եթէ մենք ծայրայեղութեան չենք հասնում կարծելի պէս, որ բացասում է համաշխարհային պատմութեան հերոսների մէջ ամէն մի առանձնայատուկ ձիրք և գնահատում է միայն նրանց՝ դէպի իրականութեան խորքերը դարձրած թափանցիկ հայեացքը, այնուամենայնիւ մեր մի պահանջը միշտ արդարացի կը մնայ. հանդուն մարդուն դատիր նրա գործերից, տաղանդը՝ նրա արդիւնքից, բայց թոյլ տուր հանճարին մարդկութեանը տալու այն, ինչ որ նա ինքն իրանից ներկայացնում է։

Պարզ է, որ Շիլլերի պէս ընդհանրական մարդկային մի դէմքութեան ճշգրիտ նկարագիրը աւելի դժուար է յաջողւում որոշելու, քան թէ նրա բանաստեղծական երկերի արժէքը էսթետիքական դաղափարների նեղ շրջանակի մէջ։ Ինձ թւում է, որ նախ և առաջ պէտք է ուշադրութեան առնել այն ուղղութիւնը, որին հետևում է հանճարը, երբ ընդարձակում է իր հոգու խորքերում մարդկութեան դաղափարը։ Ամենավսեմ դաղափարները՝ ազատութեան և անհրաժեշտութեան, ընութեան և բանականութեան, կամքի ու մտաւոր կարողութեան, ենթարկւում են նրա քննութեան և լուծւում նրա գիտակցութեան մէջ։ Մեզ հարկաւոր են հակադրութիւններ, որպէսզի կարողանանք պարզ և զօրեղ կերպով պատկերացնել Շիլլերի հանճարի ներքին մտաւոր աշխատանքը, և համեմատութիւնը Գեօթէի հետ աւելի քան անհրաժեշտ է դառնում։ Ծնուած ու մեծացած միևնոյն ժամանակում, հնթարկուելով միևնոյն քաղաքական պայմաններին, իւրացնելով կրթութեան միևնոյն տարրերը, մնալով միևնոյն ընդհանուր մտաւոր շարժման մէջ, վերջապէս, միանալով միևնոյն մեծ նպատակներով և գործելով գեղարուեստի միևնոյն ճիւղի մէջ, նրանք երկուսն էլ այնքան նմանութիւններ ունեն իրար հետ, որ նրանց տարբեր

էութիւնը խսկոյն և եթ խաւօրէն աչքի է զարնում։

Ինձ թւում է, որ այս է ամենից ընդգրկող և ամփոփ հակադրութիւնը։ Գեօթէի մեծութեանը նպաստում էր կեանքը, իսկ Շիլլերը ինքն եղաւ իր մեծութեան ստեղծողը։ Գեօթէի մէջ արտայայտւում է բնութեան զօրութիւնը, իսկ Շիլլերի մէջ՝ բանականութեան զօրութիւնը։

Գեօթէն երբէք չէր խաբւում իր զգացմունքների մէջ, բայց թոյլ ու երերուն էր իր կամքով. իսկ Շիլլերը մոլորւում էր իր զգացմունքների մէջ, բայց երկաթեայ կամքի տէր էր։ Գեօթէի կեանքը աստուածային անհրաժեշտութիւն էր, իսկ Շիլլերինը՝ կամայականութիւն և ազատութիւն։ Գեօթէն ներկայացնում է մարդուն, իբրև իր «ես»-ի երջանկութիւնը, Շիլլերը՝ իբրև «ես»-ի ոյժը։ Հէնց այդ յատկութիւններով է փայլում Շիլլերը միւս հանճարների շարքում։ Նա մի իսկական հերոս է, որ իր կեանքում յաղթեց ինքը իրան և հանգամանքների խոչընդոտները։ Մարդս ինքն պիտի լինի իր «ես»-ի ստեղծողը—ահա Շիլլերի գիտակցութեան բնաբանը։

Սրանով են բացատրւում նրա մարակող, ջերմ ու մորմոքուած տեսչանքները և նրա մէջ ապրող իդէալական ձգտումները։

Այժմ անհրաժեշտ է աչքի առնել Շիլլերի կեանքի գլխաւոր մոմենտները։ Երկու անգամ բանաստեղծը արմատական յեղաշրջում մտցրեց իր կեանքում. մէկը երբ Շտուտգարտից փախաւ, իսկ միւսը՝ երբ ինքն իրան ուրացաւ։ Սակայն նրա փախուստը Շտուտգարտից հարկաւոր է այլ կերպով մեկնել, քան կալուածատէր Կոխի տանից։ Դա միայն մի արկածալից ոստիւն չէր լայն աշխարհի գիրկը, ինչպէս այդ յաճախ լինում է մեծ մարդկանց հետ, երբ վերջիններս սաստիկ պահանջ են զգում թողնելու իրանց նեղ շրջանը։ Դանտէի և Պետրարկայի օրից ճակատագիրը ստիպել է գրեթէ ամեն մի մեծ մարդու դիմել այդ քայլին՝ հայրենիքի միապաղաղ պայմաններում չհոտելու համար։ Բայց Շիլլերի այդ փախուստը ոչ միայն շրջմոլութիւն էր, այլ և յանցանք։ Նա փախաւ զինուորական ծառայութիւնից, որի պատճառով մի որոշ ժամանակ նրան վտանգ էր սպառնում, և դեռ երկար տարիներ յետոյ նա չէր յանդգնում ոտք կոխել իր հայրենիքի սահմանները։ Եւ իրաւ, այդ քայլը արմատական մի յեղաշրջում էր. նաւերը այրուած էին, ինչպէս արեց Կորտէցը, երբ արշաւեց Աւետեաց ոսկէ երկիրը։ Բայց երկրորդ փախուստը՝ փախուստը իր սեփական «ես»-ից աւելի ևս մեծ գործ էր։ Իր երիտասարդութեան յաջողութիւններից, «Աւազակների», «Փիէսկոյի», «Սէր եւ Դարդաւանքի», և «Դոն Կարլոսի» փայլուն ընդունելութիւնից յետոյ բանաս-

տեղծը փախչում է, արհամարհելով իր փառքը, անբաւական ինքն իրանից, սուբեկտիվիզմի և երևակայութեան շրջանից թևակոխում է փաստերի, իրերի և մտքի աշխարհը։ Այդ քայլն իսկական ինքնուրոյնութիւն էր, որի մէջ երևում է զարմանալի արիութիւն՝ յատուկ իր «ես»-ի ոյժը ճանաչող մարդուն։ Այդ հերոսական ճիգերի հետևանքներն եղան մի շարք պատմական աշխատութիւններ կրօնական պատերազմների և յեղափոխութիւնների մասին, որոնց մէջ Շիլլերը ընդարձակեց իր գիտութիւնը։ Նրան գրաւում էին այն ազգերը որոնք իդէալները իրանց գոյութեան հիմնաքար էին դարձնում, այն դաւանանքը, որի համար նրանք մերկացնում էին իրանց սրերը, ազատութիւնը, որը աշխարհիս զանազան անկիւններում ապաստան էր գտնում։ Հարկաւոր էր տեսնել նաև, թէ ինչպէս տնքում էր Լուիզէ Միլլերի հեղինակը կանտի և սրա վերացական ահալից գաղափարների վրայ, որոնց մէջ ամբողջ տիեզերքը վերլուծուած է տարրերի և յայտարարուած մարդու բնութեան միութիւնը։ Սա էլ իր տեսակի յեղափոխութիւն էր որի մէջ խորասուզուած էր բանաստեղծը։ Կարիճ պայքար էր այն, որ մղում էր Կեօնիգսբերգի փիլիսոփան և նրա ոգին, հերոսութեան այն ոգին, որ բխում է նրա երկերի ամեն մի տողից։ Արի էր ճշմարտութեան նրա մաթեմատիքական իդէալը, որը նա աշխատում էր գործադրել գիտութեան բոլոր ճիւղերի մէջ. արի՝ նրա խուսափումը բնազանցական երազներից, որոնք մինչև այն՝ մղում էին մարդկութիւնը վնասուելու իր իդէալները գիտնականի առանձնասնեակում և ոչ լայն կեանքի զարգացման կուռւմ. արի, վերջապէս, բնազանցութեան կապանքներից ազատուած ոգու յարակցութիւնը պարտաճանաչութեան խիստ պատուէրների հետ։ Եւ այս երեքին վերացականութիւնների մէջ խորասուզուած էր «Դոն Կարլոս»-ի հեղինակը։ Եւ ինչ ոյժով էր կլանում նա այդ փիլիսոփայական նիւթերը, մինչև որ կարողացաւ իւրացընել նրանց։ Ոգու ինչ հերոսական լարումով էր կառուցանում նա՝ ոգու ու բնութեան մէջ առաջացած կանտական անդունդի վրայով, իր սկզբունքների կամուրջը։

Եւ երբ նա կրկին դառնում է բանաստեղծութեանը, ինքն իրան սկսում է դաստիարակել ու կրթել, աշխատելով ստեղծել մի այնպիսի անհամակրելի տիպ, ինչպիսին է Վալլէնշտէյնը, և պարապելով այնպիսի նիւթերի վրայ, որոնց մէջ ժողովուրդը կեանքի պրոզան գլորել է բանաստեղծի ճանապարհն անանցանելի դարձնող արգելքներ։

Սակայն սրանով չեն վերջանում հերոսական քայլերը

Շիլլերի կեանքում ես չգիտեմ մի երևոյթ, որ այնքան սրտաշարժ լինէը, ինչպէս նրա վերջին տասը տարիները, երբ նա յաճախ «տանջւում էր ցաւով ու միայն վայրկեաններով վայելում կեանքը» և յուզուած, գրգռուած՝ խլում էր իր հիւանդոտ մարմնից իր ամենափայլուն վարդապետական երկերը։ Եւ նա այդ տարիներում կրկին անգամ զարմացրեց աշխարհը իր բնոյթի ստեղծագործութեան նոր ոյժով։ Ինձ ըւում է թէ՝ երբ նա «Մասնիայի նորահարսի» մէջ իր գեղեցկագիտական թէորիաների կապանքները վերջնականապէս փշրեց, նա ազատուեց նրանցից ընդմիշտ։ Մինչև Շիլլերը, յունական խմբերգը, խորը անխուսափելի էր համարւում դրամատիքական տպաւորութիւն թողնելու համար. դրամատիքական սիւժետի ամենաբարձր կենտրոնացումը իղէալն էր, քնարերգական փարթամ ոճը և կատարուող անցքերի անորոշութիւնը, գործողութեան և ժամանակի միութիւնը։ Ահա այս դրաման էր տիրում բեմի վրայ, երբ Շիլլերը յանկարծակի նետուեց ժամանակակից այրող խնդիրների ասպարէզը, նորից վերցրեց իր երիտասարդութեան փողը, որի ղօրեղ հնչիւնները պնդում էին ժողովուրդների սրտերը, և ֆրանսիական յեղափոխութեան գաղափարը գտաւ իր աստուածային արտայայտութիւնը Շտաուֆֆախէրի այս հանդիսաւոր երկտողի մէջ.

Ո՛չ, բռնութիւնը վերջ ունի.
Երբ ճնշուածը իր սուրը իրաւունքից է զրկւում,
Երբ լուծը բռնակալ ղղուելի է դառնում,—
Դէպ երկինք, դէպ եթեր սլանում է նա հոգով
Եւ հպարտ, խնդագին այնտեղից ցած իջնում
Իր ձեռքում պինդ բռնած իրաւունքն՝ հաւատքով,
Իրաւունք, որ նոյնպէս փայլուն են բարձրում,
Որպէս անյաղթ-անշէջ աստեղք պսպղուն։

Իսկ դրամատիքական ձևի նեղ շրջանը աւելի ևս լայնանում է նիւթի էպիքական ընդարձակութեան շնորհիւ և, կարծես, ուրիշ օրէնք չի ճանաչում, բացի սիւժետի համամարդկային նշանակութիւնից։

Եւ երանի թէ մենք կարողանայինք աւելին լսել բանաստեղծի այդ հնչիւնների։ Բայց հերոսների վախճանը միշտ դժբաղդ է եղել։ Աքիլլէսը և Զիգֆրիդը մեռան ծաղիկ հասակում։ Բարոյական ազատութեան գաղափարը, ինչպէս Գեօթէն է ասում, իջեցրեց նրան գերեզմանը, որովհետև «պահանջում էր նրանից ֆիզիքական ոյժերի այնպիսի լարում, որին երկար չէր կարող դիմանալ նրա թոյլ կազմուածքը»։ Եւ այսպէս, ճակատագիրը խլեց գրիչն Տելլի երգչի ձեռքից այն վայրկեանին,

երբ նա՝ հասած կատարելութեան՝ անվեհեր ձգտում էր դէպի վեր ու վեր...

Միայն դրամատիքական գեղարուեստը—սրանում կասկած չկայ—կարող էր բաւականութիւն տալ այդպէս կազմակերպուած հանճարին, որովհետև նա միայն կարող է մարդուս ցոյց տալ այնպէս, ինչպէս Շիլլերն ինքն էր, իրրև իր «ես»-ի ոյժը, իր կամքի տէրը: Մարդկային ազատութիւնը որ մաքառում է աշխարհի և ճակատագրի դէմ, միշտ կը կազմի ողբերգութեան իսկական նիւթը: Կարլ Մօորը, որ փախչում է անտառները, Կարլ Մօորը, որ բարձրանում է կառափնատ, էշաֆոտ, Ֆիէսկոն, որ աքսորում է իր բարեկամ Դորեայինն և դաւաճանում իր բարեկամներ Վերրինաներին, Մարկիզ Պօզան, որ քարոզում է մի բռնակալի առաջ մտքի ազատութիւն, Վալլէնշտէյնը, որ ձեռք է մեկնում դէպի կայսրների սրբազան թագը, Օրլէանի կոյսը, որ ձգտում է ողջամարդու պատերազմական դափնիներին, Տելլը, որ իր զաւակներին պաշտպանում է՝ իջեցնելով նրանց վրայ իր արիւնոտ ձեռքը—սրանք բոլորն էլ միևնոյն դէմքերն են, որոնք թողել են կեանքի սովորական շաւիղը, կուռում են աստուածների և կուռքերի դէմ: Սրանց բոլորի մէջ էլ ապրում է դրամատիքական կեանքի ջիղը, որ ամենուրեք մտցնում է յեղափոխութեան ոյժը, ազատութեան տենչը: Թող ինչ ուզում է լինի այն զօրութիւնը, որի դէմ նրանք մաքառում են՝ Գորտնայի ահաբեկ գլուխը, որ ըմբոստանում է ազատութեան դէմ, թէ օրէնքն ու բարոյականութիւնը, Աստծու բռնապետական ողորմութիւնն ու ֆանատիկոսութիւնը, թէ դարաւոր սովորութիւնն ու պետական ըէզոնը—նրանք բոլորն էլ այն ոգիներից են, որոնք աշխատում են բանաստեղծի երևակայութեան մէջ կանգնեցնել կեանքի հսկայ հոսանքը ու տիրել նրա վրայ: Կեանքը դարձրեց Շիլլերին ողբերգու, իսկ նրա զօրեղ բնոյթն ու կամքը՝ գործի բանաստեղծ: Նրա ընդգրկող հոգին ու փիլիսոփայական խորութիւնը մերկացրին նրա աչքում իսկական ողբերգութեան արմատը՝ իրար դէմ անհաշտ ու անվերջ մաքառող ոյժերի և իրաւունքների հակասութիւնն ու պայքարը, երկրային կեանքի ամենախոր պրոբլեմները:

Պատմութիւնը, ասում է Հեգելը, ազատութեան գիտակցութեան մէջ կատարուող յառաջադիմութիւնն է, իսկ Շիլլերի բոլոր երկերի մէջ, ասում է Գեօթէ, հոսում է ազատութեան գաղափարը: Այդ պատճառով Շիլլերի դէմքն ու ազդեցութիւնը պատմական մեծ նշանակութիւն ունեն: Ի հարկէ, դժուար է պնդել, թէ քանի հազարաւոր մարդիկ Շիլլերի քաղաքական և պատմական լայն աշխարհայեցողութեամբ են մնացել իրանց միտքը ժողովրդի

նկարչին կացութեան նկատմամբ, բռնկուել քաղաքական ձըգտումներով, ոգևորուել քաղաքական նպատակներով։ Բայց երբ տեսնում ենք, թէ ինչ հրապուրիչ ազդեցութիւն է թողնում նա երիտասարդութեան վրայ, մենք գալիս ենք այն համոզման, որ նա ընդհանրապէս մեծ դեր է կատարում՝ զարթեցնելով գերմանացիների մէջ քաղաքական ջերմ ձգտումներ։ Այն օրից ի վեր, երբ ուսանողները Օրլեանի կոյսի ներկայացումից յետոյ հանդիսաւոր կերպով նրան ձեռքերի վրայ բարձրացնելով տուն տարան, նա դարձաւ երիտասարդութեան երկրպագուն և հայրենասիրութեան քաջարի աւետաբերը։

Բայց նրա դէմքը աւելի ևս մեծանում է, երբ մենք դիտում ենք նրան, իբրև իր հանճարի ստեղծագործողի, իբրև ազատութիւնը—պետութեան օրէնք դաւանող՝ անվախ քարոզչի։ Մեր՝ գերմանական ազատութիւնը նրան է պարտական իր յաղթութիւններով, և խոնարհւում է նրա առաջ։ Մեզ հարկաւոր էին ոչ միայն Մոնտեսկիէօյի սահիրան և Վոլտերի հեգնութիւնը, այլ և Ռուսսօյի արժատական մըտքերի շէնքն ու յեղափոխութեան հակայական ուրուականը, որպէսզի մենք թողնէինք մեր խաղաղ առանձնասենեակները և յանդգնէինք դուրս գալ փողոց ու խառնուել քաղաքական ընթացիկ անցքերին։ Մեզ հարկաւոր էր մի առաջնորդ, որ վառէր ազատութեան կրակը սուրբ տաճարի վրայ։ Եւ այդ առաջնորդը եղաւ Շիլլերը։ Նրա Տէլլը ազատութեան հրովարտակն էր։ Եւ բնական էր, որ Տէլլի ներկայացումը Բերլինում արգելեցին—մի շքանշան, որ կնքեց մեր բանաստեղծի ճակատը ազատութեան դրոշմով։

Շիլլերը 19-րդ դարու մարդ էր։ Այս դարու քաղաքական տենդէնցների, նրա ազգային և ազատարար շարժումների ջահը բռնած ունէր իր ձեռքում։ Եւ նա միշտ կը մնայ մեր քաղաքական ամենամեծ առաջնորդներից մէկը, պատմական ոգու և քաղաքական տրամադրութեան քարոզիչն ու առաջնորդը։ Բայց ի հարկէ, այդ բոլորը ստեղծագործող բանաստեղծին երբեմն էլ ձնաստում էր։ Կամքի հակայական ոյժը, որ արտայայտւում է նրա ամեն մի տողում, երբեմն մոգնում էր նրա բանաստեղծութեան մէջ հռետորական գծեր։ Այդ իսկ պատճառով էլ նա մեր ամենամեծ բանաստեղծը չէ, բայց ամենամեծ դաստիարակն է. նա մեր ժողովրդի յաւտուն, դիտող աչքը չէ, բայց նրա ամենասիրելի հեղինակն է. նա Գեօթէի պէս մեծ առաքեալ չէ, բայց ամենից հրապուրիչ հռետորն է—ինչպէս հին Իսրայէլի ժամանակ եղել են մեծ մարգարէները։

Գերմ. թարգ. Մ. Ղարաբէկեան